

ՍԵՐԳԵՅ ԲԱՐԵՆՈՒԴԱՐՅԱՆ

ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՅՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արդարադատության իրականացումը պետական գործունեության հիմնական ձևերից մեկն է: Գործելով օրենքի հիման վրա՝ դատարանը ոչ միայն ապահովում է քաղաքացիների, հասարակության և պետության շահերի հուսալի իրավական պաշտպանություն, այլև օրենքի և դատարանի առջև դատավարության բոլոր մասնակիցների հավասարությունը: Դատական աշխատանքի որակն ու արդյունավետությունը կախված է ոչ միայն դատավորների պրոֆեսիոնալիզմից, քրեադատավարական իրավունքի տեսության լիարժեք տիրապետումից և դատաքննության կարգի մասին օրենքի պահանջների պարզաբանումներից, այլև նրանից, թե ինչպես են դատավորները նախապատրաստվում դատաքննությանը, կազմակերպում հարցերի այն շրջանակի քննարկումը, որոնք լուծվում են դատավճիռ կայացնելիս: Այդ գործունեության կարգավորումն օրենքի նորմով չի կանոնակարգվում, այն չի արտացոլվում նաև ուսումնական ձեռնարկներում, և չնայած դրան, հաջողությամբ իրականացվում է դատավորների կողմից ձևավորված պրակտիկայի և աշխատանքային գործունեության ընթացքում ջեռք բերված փորձին համապատասխան:

Դատաքննությունը քրեական դատավարության կենտրոնական և գլխավոր փուլն է: Հենց դատաքննության փուլում է ըստ էության քննվում և լուծվում քրեական գործերի ճնշող մեծամասնությունը, կատարվում է քրեական գործի համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումը, պարզվում են ամբաստանյալին մեղադրող և արդարացնող, նրա պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները՝ քրեական սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Դատարանը կարող է ամբաստանյալին մեղավոր ճանաչել հանցագործության կատարման մեջ և նրա նկատմամբ համապատասխան պատիժ նշանակել միայն դատաքննությամբ ձեռք բերված մեղադրող ապացույցների իրավական գնահատման արդյունքում: Այն ավարտվում է պետության անունից արձակված դատական ակտերի կայացմամբ: Դատավճիռ կայացումը հնարավոր է միայն քրեական դատավարության տվյալ փուլում:

«Դատաքննության ընդհանուր պայմանները» իրենց ձևակերպումն են ստացել ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՔԴՕ) զլուխ 41-ում: Դրանում ընդգրկված են նորմեր, որոնք համարվում են ընդհանուր դատաքննության համար և գործում են ամբողջ փուլի ընթացքում: Դատաքննության ընդհանուր պայմանները «օրենքում ամրագրված ընդհանուր պայմաններ են, որոնք արտացոլում են դատաքննության յուրահատկությունը, հիմնական և անփոփոխ են ցանկացած քրեական գործի վարույթի ժամանակ և առաջին ատյանի դատարանում յուրաքանչյուր գործի քննության դեպքում»¹: Դրանք ավելի քիչ են ընդհանրացված, քան քրեական դատավարության սկզբունքները, բայց ոչ այնքան կոնկրետ, որքան ՔԴՕ-ի առանձին պահանջները՝ ուղղված այս կամ այն դատական գործունեության կատարմանը կամ որոշման կայացմանը: Դրանց հիմնական խնդիրն է կարգավորել իրավիճակը, որը ՔԴՕ-ն չի կանոնակարգում, բայց և կանոնակարգման անհրաժեշտությունը չի բացառում: Դատաքննության ընդհանուր պայմանները տվյալ դեպքում ուղղակի տարածվում են այդ իրավիճակների վրա:

Կարելի է առանձնացնել դատաքննության այնպիսի ընդհանուր պայմաններ, ինչպիսիք են անմիջականությունը, բանավորությունը, դատաքննության անընդհատությունը, դատարանի կազմի անփոփոխելիությունը, դատաքննության սահմանները, դատաքննության ընթացակարգը, ինչպես նաև քրեական գործով դատաքննության հետաձգումը և քրեական գործի կասեցումը, քրեական գործի կարճումը դատաքննության ժամանակ, խափանման միջոցի հարցի լուծումը, դատաքննության դատավարական փաստաթղթերի կազմումը:

Քրեական գործերի դատաքննությունն ինքնին տեղի է ունենում ընդհանուր իրավասության դատարանում և բաղկացած է հետևյալ մասերից՝ 1) նախապատրաստական մաս, 2) դատաքննություն, 3) դատական վիճաբանություններ, 4) ամբաստանյալի վերջին խոսք, 5) դատավճիռ կայացում:

Դատաքննությունը կառուցվում է քրեական դատավարության սկզբունքների հիման վրա: Դատաքննության ընթացքում իրագործվում է քրեական դատավարության բոլոր սկզբունքների հիմնական մասը: Սակայն այդ սկզբունքներն ամբողջովին չեն բացահայտում տվյալ փուլի բոլոր առանձնահատկությունները:

Անմիջականության իմաստով, որպես դատաքննության ընդհանուր պայմաններից մեկն ամրագրված է ՀՀ ՔԴՕ 358 հոդվածի 3-րդ մասում. որտեղ նշված է, որ դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե դրա

հետևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա:

Այսինքն՝ դատարանի համար անբավարար է սոսկ ծանոթանալ իրեն և ապացույցների արձանագրությանը, այն անմիջականորեն պետք է զննվի դատարանի և դատավարության մասնակիցների կողմից: Դատարանը պահպանելով հարցաքննության կարգն ու հերթականությունը, ինքը ևս իրավունք ունի հարցաքննել ամբաստանյալին, տուժողներին, վկաներին, լսել փորձագետներին, հրապարակել քննչական գործողությունների և այլ փաստաթղթերի արձանագրությունները: Դատարանը չի կարող վկայակոչել այն ապացույցները, որոնք նա չի հետազոտել և այդ գործընթացը չի արձանագրել դատական նիստի արձանագրության մեջ: «Եթե հետազոտումը, օրինակ՝ տուժողի, վկաների ցուցմունքները, կատարվել են օրենքի խախտմամբ, դրանք չեն կարող ճանաչվել արժանահավատ ապացույցներ»²:

Բանավորությունը՝ որպես դատաքննության ընդհանուր պայմաններից մյուսը, նշանակում է, որ քրեական գործի դատական քննության ընթացքում բանավոր ձևով (անհրաժեշտության դեպքում) ընթերցվում են դատավարության առանձին մասնակիցների նախաքննական ցուցմունքները, հրապարակվում են քննչական գործողությունների արձանագրությունները, փաստաթղթային ստուգումները և այլ փաստաթղթեր: Դատարանն իրավունք ունի բանավոր ձևով հարցեր տալ և պատասխաններ ստանալ ամբաստանյալի, տուժողի, վկայի հարցաքննության ժամանակ և պարտավոր է դրանք անփոփոխ ձևով ֆիքսել դատական նիստի արձանագրության մեջ:

Անմիջականությունը և բանավորությունը՝ որպես դատաքննության ընդհանուր պայմաններ, հարաբերակցվում են քրեական դատավարության նույնանման սկզբունքի հետ, ըստ որի գործին մասնակցող դատարանը և կողմերը ապացուցման ենթակա փաստերի վերաբերյալ տեղեկությունների մեծ մասը ստանում են օրենքում նշված ապացույցների աղբյուրներից: Դրանք ամբաստանյալի, տուժողի, վկայի և այլ մասնակիցների դատաքննական ցուցմունքներն են, որոնք զնահատվելով դատարանի կողմից՝ դրվում են նրա կայացրած մեղադրող կամ արդարացնող դատավճռի հիմքում:

Դատաքննության բանավորությունը նշանակում է, որ դատարանն ապացույցներն ընկալում է բանավոր խոսքի միջոցով, և դատավարության մասնակիցները դրանք բանավոր ձևով քննարկում են՝ արտահայտելով իրենց սուբյեկտիվ վերաբերմունքն այս կամ այն ապացույցի նկատմամբ:

Տվյալ սկզբունքը սերտորեն կապված է հրապարակայնության սկզբունքի հետ:

Հրապարակության սկզբունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում, որտեղ նշված է, որ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք, այսինքն՝ դատաքննությունն իրականացվում է դոնբաց և քրեական գործի ելքով շահագրգռված կամ չշահագրգռված բոլոր անձինք, որոնք հասել են դատաքննությանը ներկա գտնվելու տարիքի, իրավունք ունեն մասնակցեն ցանկացած քրեական գործի դատական քննությանը:

Գործի լսումը փակ դատաքննությամբ թույլատրվում է օրենքով նախատեսված դեպքերում: ՀՀ ՔԴՕ 16-րդ հոդվածը կոնկրետացնում է սահմանադրական տվյալ նորմը: Հրապարակայնությունը դատավարությունում ժողովրդավարության դրսևորման ցուցանիշ է: Քաղաքացիները կարող են ներկա գտնվել դատաքննությանը, հետևել գործի քննությանը, հաղորդակցվել մասսայական տեղեկատվական միջոցների հետ՝ տեսածի և լսածի աղբյուրով: Դատաքննության ժամանակ բոլոր դատավարական գործողությունները, բացի խորհրդակցման սենյակում վճռի կայացումից և մի քանի որոշումների արձակումից (ՔԴՕ 359 հոդվ.), հիմնվում են հրապարակայնության սկզբունքի վրա:

Դատաքննության անընդհատությունը նշանակում է, որ դատարանը չի կարող սկսել մեկ այլ գործի քննությունը, մինչև առաջին գործով որոշում կայացնելը:

Դատարանի կազմի անփոփոխելիությունը նշանակում է, որ յուրաքանչյուր քրեական գործ պետք է քննվի դատարանի նույն կազմով: Եթե դատավորներից մեկը այս կամ այն հանգամանքի ուժով զրկվել է դատաքննությանը մասնակցելու հնարավորությունից, նա փոխարինվում է այլ դատավորով, իսկ գործի քննությունը նորից վերսկսվում է:

Համաձայն ՀՀ ՔԴՕ 317 հոդվածի դատաքննությունը նշանակված ժամին բացում է նախագահողը և հայտարարում, թե որ գործն է ենթակա քննության: Միայն դրանից հետո դատարանը և դատաքննության մասնակիցները իրավունք են ձեռք բերում կատարելու օրենքով նախատեսված բոլոր գործողությունները:

Նախագահողը ղեկավարում է ամբողջ դատաքննությունը՝ իրականացնելով քրեադատավարական օրենքով նախատեսված հետագա բոլոր դատավարական գործողությունները: Նախագահողն անմիջականորեն ղեկավարում է դատական նիստը, օգտագործում քրեադատավարական օրենքով նախատեսված միջոցներն՝ ուղղված գործի հանգամանքների համա-

կողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը և ճշմարտության բացահայտմանը՝ միաժամանակ դատաքննությունից հանելով բոլոր միջնորդությունները, հայտարարություններն ու հարցերը, որոնք կապ չունեն գործի հետ՝ ապահովելով դատաքննության դատախարակչական ազդեցությունը: Նախագահողը պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի դատական նիստի ժամանակ պատշաճ կարգ ու կանոն ապահովելու համար: Նա պետք է պահպանի դատավարական օրենքով սահմանված կանոնները, կարողանա դատական նիստում ստեղծել գործի քննության հանգիստ, պաշտոնական և գործնական մթնոլորտ, անկողմնակալ վերաբերմունք ցուցաբերել դատավարության բոլոր մասնակիցների հանդեպ, իսկ գործին մասնակցող անձինք և քաղաքացիները պարտավոր են պահպանել սահմանված կարգը և ենթարկվել նախագահի օրինական ցուցումներին:

Նախագահողը բացատրում է կողմերին և այլ անձանց իրենց իրավունքներն ու պարտականությունները և հետևում է, որպեսզի դատավարության մասնակիցների իրավունքները ռեալ օգտագործվեն, իսկ պարտականությունները պատշաճորեն կատարվեն:

Նախագահողի ցուցումները՝ կապված քննվող գործի հետ, պարտադիր են դատաքննությանը ներկա գտնվող անձանց համար: Դատաքննությանը մասնակիցների առարկությունները նախագահողի գործողությունների դեմ ամրագրվում են դատական նիստի արձանագրության մեջ:

Դատական նիստը բացելուց հետո՝ դատական նիստի քարտուղարը նախագահողին զեկուցում է դատաքննությանը դատախազի, պաշտպանի, դատավարույթի, այլ մասնակիցների ներկայության մասին: Դատական նիստի քարտուղարին կարող է բացարկ հայտնվել, որի պարագայում հարցը լուծվում է դատարանի կողմից (ՔԴՕ 95 հոդվ.): Դատական քննության քարտուղարը համարվում է դատավարության անփոխարինելի մասնակիցը՝ օժտված համապատասխան դատավարական իրավունքներով, որոնցից գլխավորն արձանագրություն կազմելն է, որը առավելագույնս պետք է արտացոլի դատաքննության ամբողջական ընթացքը և դատական յուրաքանչյուր գործողությունն առանձին-առանձին:

ՀՀ ՔԴՕ 23-րդ հոդվածը սահմանում է կողմերի հավասարությունը մրցակցային դատաքննության ժամանակ: Քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական դատավարության օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պահպանելու հավասար հնարավորություններով:

Դատարանը դատավճիռը հիմնավորում է միայն այն ապացույցներով, որոնց հետազոտման ընթացքում կողմերից յուրաքանչյուրի համար ապահովվել են հավասար պայմաններ:

Ակնհայտ է, որ մինչ դատական վարույթում նախաքննության և հետաքննության ժամանակ, հնարավոր չէ ապահովել բացարձակ իրավահավասարություն, քանզի կողմերը չեն կարող որևէ մեկին ներկայացնել ապացույցներ և որևէ մեկի առաջ պնդել իրենց կարծիքը: Եվ հենց ապացույցների ներկայացման և իրենց տեսակետների շարադրման ժամանակ կարևոր է լինել իրավահավասար իր դատավարական մրցակցի հետ:

Մեղադրողը, ամբաստանյալը, պաշտպանը, ինչպես նաև տուժողը, քաղաքացիական հայցվորը և նրանց ներկայացուցիչներն օժտված են ապացույցներ ներկայացնելու իրավահավասարությամբ, մասնակցելու ապացույցների հետազոտմանը և միջնորդություններ անելուն: Օրենքը տվյալ դեպքում ի նկատի ունի բոլոր հնարավոր մեղադրողներին և պաշտպաններին (պետական մեղադրող, մեղադրող-տուժող, պաշտպան):

Առավել էական է դատաքննության մասնակիցների իրավահավասարությունը ապացուցման ժամանակ: Առավելության բացակայությունը դատարանում՝ ապացուցման հնարավոր մասով, համարվում է կողմերի իրավունքների իրականացման և պաշտպանության իրական երաշխիք:

Կողմերի իրավահավասարությունը, նախապայման է ստեղծում արդարադատության ճիշտ իրականացման համար: Դատարանում ապացուցման առավելության բացակայության հնարավորությունը համարվում է կողմերի իրավունքների իրական երաշխիքը: Այն հնարավորություն է տալիս դատարանին օգտագործել նրանց ակտիվությունն ու շահագրգռվածությունը գործի որոշակի ելքի նկատմամբ և հասնել քրեական գործի օրինական, հիմնավոր և արդարացի լուծմանը:

Դատաքննության մասնակիցների հիմնական դատավարական իրավունքների հավասարությունը չի նշանակում նրանց խնդիրների ու պարտականությունների հավասարություն: Կողմերն իրավունք ունեն մասնակցել դատավարությանը, առանց որոնց դատաքննությունը կդառնա անհնար:

Դատաքննությանը ամբաստանյալի մասնակցությունն անհրաժեշտ է պաշտպանության իրավունքի ապահովման, ճշմարտության բացահայտման, դատավարության դաստիարակչական նպատակներին հասնելու համար: Վերջինիս ներկայությունը դատարան պարտադիր է:

Գործի դատաքննությունն ամբաստանյալի բացակայությամբ հնարավոր է բացառիկ դեպքերում, եթե դա չի խոչընդոտում գործով ճշմարտության բացահայտմանը՝ 1) երբ ամբաստանյալը գտնվում է ՀՀ սահմաններից դուրս և խուսափում է դատարան ներկայանալուց, 2) երբ հանցագործության վերաբերյալ գործով, որի համար չի կարող պատիժ նշանակվել

ազատագրկման ձևով, ամբաստանյալը միջնորդում է գործը լսել առանց իր ներկայության:

Ամբաստանյալի չներկայանալու դեպքում գործի լսումը պետք է հետաձգվի՝ բացառությամբ ՀՀ ՔԴՕ նախատեսված դեպքերի:

Դատարանն իրավունք ունի չներկայացած ամբաստանյալին բերման ենթարկել, նրա նկատմամբ խափանման միջոց ընտրել կամ էլ այն փոխարինել ավելի ծանրով: Ամբաստանյալի բացակայությամբ գործի քննությունն այն դեպքում, երբ դա օրենքով չի թույլատրվում, պարտադիր հանգեցնում է դատավճռի վերացման:

Դատաքննությունը սկսելիս կարևոր նշանակություն է ձեռք բերում ամբաստանյալի անձի պարզումը:

Դատարանի այդ գործողության էությունը նրանում է, որ համոզվածություն լինի այն փաստալիցն հանգամանքի վերաբերյալ, որ դատարան ներկայացվել կամ բերվել է այն անձը, որը որպես ամբաստանյալ պետք է մասնակցի տվյալ քրեական գործի քննությանը: Դրա համար օրենքը դատարանին պարտավորեցնում է պարզել ամբաստանյալի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան թիվը, բնակության վայրը, զբաղմունքը, կրթությունը: Մյուս տվյալները, որոնք վերաբերվում են ամբաստանյալի անձին (դատվածության առկայություն, ընտանիքի նյութական վիճակ) կարող են հաշվի առնվել պատժի տեսակի կամ չափի սահմանման ժամանակ, իսկ ընդհանուր առմամբ դրանք կարող են պարզվել դատաքննության ընթացքում:

Ամբաստանյալի անձը պարզելուց հետո դատարանը պարզում է՝ արդյո՞ք նրան տրվել է օրենքով նախատեսված փաստաթղթերի կրկնօրինակները՝ մեղադրական եզրակացությունը կամ դատարանի որոշումը, մեղադրանքի փոփոխման դեպքում՝ խափանման միջոց ընտրելու վերաբերյալ որոշումը կամ դատարան կանչվող անձանց ցուցակը: Գործի քննությունը դատաքննության ժամանակ չի կարող շարունակվել, եթե այդ փաստաթղթերը չեն հանձնվել ամբաստանյալին: Գործը նաև չի կարելի լսել, երբ փաստաթղթերը չեն հանձնվել ամբաստանյալին: Գործը նաև չի կարելի լսել, երբ փաստաթղթերը ամբաստանյալին տալու կամ փոխանցելու պահից չի անցել երեք օր: Նման դեպքերում որոշում է կայացվում դատաքննությունը հետաձգելու մասին:

Քրեական օրենսդրությունը սահմանում է դատաքննությանը պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերը անկախ նրանից՝ եղել է այդ առթիվ ամբաստանյալի միջնորդությունը, թե ոչ: Լինելով կողմ, ամբաստանյալի պաշտպանը մասնակցություն է ունենում ապացույցների հետազոտմանը, արտահայտում է իր կարծիքը դատաքննության ժամանակ առա-

ջացած հարցերի վերաբերյալ, դատարանին ներկայացնում է պաշտպանության կողմի դատողությունները մեղադրանքի էության վերաբերյալ: Գործով նրա դիրքորոշումը չպետք է սկզբունքորեն հակասի ամբաստանյալի տեսակետին: Պաշտպանի դատարան չներկայանալու դեպքում դատարանը միջոցներ է ձեռնարկում նրան փոխարինելու, այն դեպքերում երբ դա հնարավոր չէ՝ դատարանը իր որոշմամբ հետաձգում է գործի քննությունը:

Դատաքննությանը չներկայացած պաշտպանը կարող է փոխարինվել ամբաստանյալի համաձայնությամբ: Որպես կողմ պաշտպանն իրավունք ունի ներկայացնել ապացույցներ անել միջնորդություններ, հայտնել բացարկներ, մասնակցել դատական վիճաբանություններին:

Դատաքննությանը մասնակցող տուժողին, քաղաքացիական հայցվորին և քաղաքացիական պատասխանողին, որոնք պաշտապնում են իրենց շահերը, դատարանը հնարավորություն է տալիս համակողմանիորեն հետազոտել գործի հանգամանքները, ներկայացնել պաշտպանության եկթակա իրենց շահերը և առաջադրել իրենց պահանջները ամբաստանյալի նկատմամբ:

Դատաքննությանը տուժողը մասնակցում է իրագործելու միմյանց հետ սերտ կապված երկու ֆունկցիաներ. դրանցից մեկը իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է, մյուսը՝ գործի հանգամանքների հետազոտումը:

Դատաքննության ժամանակ տուժողն օգտվում է ապացույցներ ներկայացնելու, ապացույցների հետազոտմանը մասնակցելու, միջնորդություններ անելու հավասարապես պետական մեղադրողի, ամբաստանյալի, պաշտպանի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի հետ: Մինևսյն ժամանակ, որպես ապացուցողական տեղեկատվության կրող, տուժողը հավաստեցվում է վկային և նրա վրա տարածվում են հարցաքննության համար սահմանված կանոնները (ՀՀ ՔԴՕ հոդվ. 340): Նշված կանոնները պահանջում են մասնավորապես միջոցների կիրառում, որպեսզի հարցաքննված վկաները չհաղորդակցվեն չհարցաքննվածների հետ: Տվյալ կանոնի նպատակն է վերացնել նման հաղորդակցության ազդեցությունը չհարցաքննվածների ցուցմունքների վրա: Դրա համար դատարան ներկայացած վկաները մինչև դատաքննության սկիզբը դատաքննության դահլիճից դուրս են հրավիրվում, իսկ հարցաքննությունից հետո մինչև դատաքննության ավարտը իրավունք չունեն դուրս գալ դահլիճից առանց նախագահի թույլտվության:

Տարածվում են արդյոք այդ միջոցները տուժողների վրա:

Չհարցաքննված տուժողը դուրս է հրավիրվում դահլիճից այն ժամանակ, երբ կատարվում է այլ անձանց քննություն:

«Տուժողի մասնակցությունը դատաքննությանը, նրա ներկայությունը դատաքննությանը գործով ամբողջ դատաքննության ընթացքում հիմնական և անհրաժեշտ պայման է նրա համար, որպեսզի տուժողը կարողանա օգտագործել այն իրավունքը, որը նրան տրված է դատավարության տվյալ փուլում»⁶:

Քաղաքացիական հայցվորի կամ նրա ներկայացուցչի չներկայանալու դեպքում դատարանը քաղաքացիական հայցը թողնում է առանց քննության, ընդ որում քաղաքացիական հայցվորին իրավունք է վերապահվում հայցը հարուցել քաղաքացիական դատավարության կարգով:

Դատարանն իրավունք ունի քաղաքացիական հայցվորի, նրա օրինական ներկայացուցչի միջնորդությամբ քաղաքացիական հայցը քննության առնել նրա բաժակայությամբ (ՀՀ ՔԴՕ հոդվ. 308, մ. 2):

Դատաքննությունը որպես կանոն ավարտվում է դատավճիռ կայացնելով, այսինքն՝ ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության և նրա նկատմամբ պատժի միջոցների կիրառմամբ կամ չկիրառմամբ:

Դատաքննությունը կարող է նաև ավարտվել գործը կարճելու վերաբերյալ որոշում կայացնելով:

Դատական նիստին կանչված անձանցից որևէ մեկի չներկայանալու կամ կողմերի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ նոր ապացույցներ պահանջելու անհրաժեշտության հետևանքով գործի քննությունն անհնարին լինելու դեպքում դատարանը հետաձգում է քննությունը և միջոցներ է ձեռնարկում չներկայացած անձանց ներկայությունն ապահովելու կամ նոր ապացույցներ պահանջելու համար: Այս դեպքում դատարանը սահմանում է ժամկետ, որով հետաձգվում է գործի քննությունը (ՀՀ ՔԴՕ հոդվ. 310, մ. 1):

Եթե ամբաստանյալը թաքնվել է դատից, ինչպես նաև ամբաստանյալի հոգեկան կամ այլ ծանր հիվանդության դեպքում, որը նրան զրկում է դատարան ներկայանալու հնարավորությունից, դատարանն այդ ամբաստանյալի նկատմամբ կասեցնում է գործի վարույթը, մինչև նրա հայտնաբերելը կամ մինչև նրա առողջանալը, և քննությունը շարունակվում է մնացած ամբաստանյալների նկատմամբ (ՀՀ ՔԴՕ հոդվ. 310, մ. 2):

Դատաքննության ընթացքում առաջացող բոլոր հարցերով, գլխավորապես ընթացակարգային բնույթի, դատարանն ընդունում է բազմաթիվ և տարատեսակ որոշումներ, որոնք նույնպես իրենց ձևակերպումն են ստանում որոշումներում:

Օրենքը սահմանում է դատարանի կողմից որոշումների կայացման երկու կարգ: Մի խումբ որոշումներ պետք է կայացվեն միայն խորհրդակցական սենյակում՝ դատավորների խորհրդակցական սենյակին բնորոշ գաղտնիության պայմաններում: Այդպիսի որոշումները շարադրվում են առանձին փաստաթղթի տեսքով և ստորագրվում դատավորի կողմից: Այդպիսի որոշումներ են արձակվում, օրինակ՝ գործի հարուցումը նոր մեղադրանքով կամ էլ նոր անձի նկատմամբ, գործը կարճելու, խափանման միջոցի ընտրման, փոփոխման կամ վերացման, բացարկների, փորձաքննության նշանակման ժամանակ և այլն: Որոշումների մյուս խումբը դատարանի հայեցողությամբ կարող են կայացվել կամ վերոհիշյալ կարգով կամ տեղում դատավորների խորհրդակցելուց հետո՝ որոշումն ամբողջությամբ կամ մասնակի ներառելով դատական նիստի արձանագրության մեջ:

Դատական քննության ժամանակ դատարանի կայացրած որոշումները հրապարակվում են դատական նիստում (ՀՀ ՔԴՕ հոդվ 313, մ. 4): Օրենքը սահմանափակում է դատարանի կողմից գործի քննության սահմաններն այն անձանց նկատմամբ, ում կողմից կատարված արարքները քննվում են և որի վերաբերյալ կարող է դատավճիռ կայացվել, ինչպես նաև մեղադրանքի բովանդակության մասով, որի վերաբերյալ այն կայացվում է:

Գործի քննությունը դատարանում կատարվում է միայն մեղադրյալի նկատմամբ սույլ այն մեղադրանքով, որը բովանդակվում է դատաքննությունը նշանակելու մասին որոշման մեջ:

Անձանց շրջանակի նկատմամբ դատաքննության սահմանները փոփոխվել չեն կարող: Դատարանը քննում է գործը և դատավճիռ է կայացնում միայն ամբաստանյալի նկատմամբ:

Դատաքննության շրջանակները մեղադրանքի բովանդակության մասով սահմանափակվում են այն մեղադրանքով, որի վերաբերյալ գործը գտվում է դատարանի վարույթում: Օրենքը թույլատրում է դատարանում մեղադրանքի փոփոխման հնարավորությունը, միայն եթե դրանով իսկ՝ 1) չի վատթարանում ամբաստանյալի վիճակը, 2) չի խախտվում պաշտպանության նրա իրավունքը:

Ամբաստանյալի վիճակը կարող է վատթարանալ նրան մեղավոր ճանաչելու դեպքում՝ առավել ծանր հանցագործության կատարման համար, քան ս, յ, ինչը նրան մեղսագրվում է: Դրա տակ հասկացվում է այն մեղադրանքը, որը կարող է առավել ծանր պատիժ առաջացնել: Չի թույլատրվում մեղադրանքի որակման կամ նրա բովանդակության փոփոխություն քրեական օրենքի այն հոդվածով, որը նախատեսում է առավել ծանր սանկցիա: Եթե քրեական օրենքի սանկցիայի վերին կամ ներքին սահմանը, որով պետք է որակվի արարքը, բարձր է կամ էլ նախատեսված է լրացուցիչ

պատիժ կամ էլ հնարավոր է պատիժը կրելու առավել խիստ ռեժիմի սահմանում, ապա մեղադրանքը փոփոխելն անթույլատրելի է:

Առավել ծանր կլինի այն մեղադրանքը, որով մեղադրյալի արարքի որակումը չի փոփոխվում, բայց մեղադրանքի կազմում ընդգրկվում են փաստացի հանգամանքներ, որոնք հանգեցնում են պատասխանատվության բարձրացման և պատժի ուժեղացման հնարավորությունը:

Մյուս խոչընդոտը համարվում է ամբաստանյալի պաշտպանության իրավունքի խախտման հնարավորությունը: Դատարանը կարող է փոփոխված մեղադրանքով դատավճիռ կայացնել այն դեպքում, երբ ամբաստանյալը հնարավորություն է ունեցել օգտվել ՔԴՕ նախատեսված բոլոր իրավունքներից և ամբողջովին օգտագործել այդ մեղադրանքը ժխտելու բոլոր օրինական միջոցները և հասնել դրանում իր պատասխանատվության մեղմացմանը: Եթե նոր մեղադրանքն առաջացել է սոսկ դատաքննության ժամանակ, ապա այդպիսի հնարավորություն ամբաստանյալը չունի:

Դատարանն իրավունք չունի դատավճիռ կայացնել փոփոխված մեղադրանքով, եթե այն փաստացի հանգամանքներով էապես տարբերվում է այն մեղադրանքից, որը մեղսագրվում է առանձին դատաքննություն նշանակելու փուլում: Այդպիսին կլինի անձին այնպիսի հանցագործության մեջ մեղադրելը, որն ընդհանուր ոչինչ չունի ամբաստանյալին մեղսագրված նախկին արարքի հետ կամ էլ տարբերվում է նրանից իր հիմնական տարբերով: Եթե նոր մեղադրանքը էականորեն տարբերվում է նախկին մեղադրանքից իր փաստացի կազմով, ապա դատապարտել դրանով չի թույլատրվում, թեկուզև այն կարող է հանգեցնել նվազ խիստ պատիժ նշանակելու հնարավորության՝ համեմատած այն պատժի հետ, որ կարող էր նշանակվել առաջին մեղադրանքով: Բոլոր դեպքերում, երբ մեղադրանքն անհրաժեշտ է փոխել առավել ծանր մեղադրանքով կամ էլ այն փաստացի հանգամանքներով էականորեն տարբերվում է ամբաստանյալին մեղսագրվածից, քրեական գործը ենթակա է ուղարկման լրացուցիչ նախաքննության: Իսկ այն դեպքերում, երբ անհրաժեշտ է բացառել մեղադրանքի մասը կամ էլ հանցագործության փաստական հանգամանքները, որոնք ծանրացնում են ամբաստանյալի պատասխանատվությունը, դատարանն իրավունք ունի շարունակել գործի քննությունը և դատավճիռ կայացնել փոփոխված մեղադրանքով:

Դատաքննության շրջանակները սահմանափակում է մեղադրանքը, որը բովանդակվում է դատաքննություն նշանակելու որոշման մեջ:

Եթե մեղադրանքը փոփոխվել է դատարանի որոշմամբ, ապա դատարանն իրավունք չունի վերականգնել մեղադրանքն այն ծավալով, որը ձևակերպում է ստացել մեղադրական եզակացության մեջ:

Եթե դատաքննության ժամանակ կայարգվեն հանգամանքներ ամբաստանյալի կողմից հանցագործություն կատարելուն, որով նրան նախկինում մեղադրանք առաջադրված չի եղել, դատարանը չդադարեցնելով դատաքննությունը, գործ է հարուցում նոր մեղադրանքով և անհրաժեշտ նյութերն ուղարկում ընդհանուր կարգով նախաքննություն կատարելու համար:

Եթե դատաքննության ընթացքում պարզվել են հանգամանքներ, որոնք վկայում են անձի կողմից հանցագործության կատարումը, որի համար նա չի ենթարկվել քրեական պատասխանատվության, դատարանն այդ անձի նկատմամբ հարուցում է քրեական գործ և անհրաժեշտ նյութերն ուղարկում հետաքննություն կամ նախաքննություն կատարելու: Դատաքննության ընթացքում դատարանը կարող է բացահայտել նաև արդարադատության ճիշտ ու անշեղ իրականացմանը խոչընդոտող դիտավորյալ գործողություններ, այսինքն՝ հանցագործություններ, որոնք կատարվել են տուժողի, վկայի կամ փորձագետի կողմից, որոնց նկատմամբ դատարանն իրավունք ունի հարուցելու քրեական գործ: Քրեական գործի հարուցումը վկայի, տուժողի կամ փորձագետի նկատմամբ, որոնք տվել են ակնհայտ սուտ ցուցմունք կամ եզրակացություն, կարելի է կատարել դատավճռի կայացման հետ միաժամանակ:

Օգտագործված գրականություն

1. St'u Рыжаков А.П. Уголовный процесс: Учебник для ВУЗ-ов. М.: "Издательство ПРИОР" 1999 г. С. 445
2. St'u Курченко В., Павлов А. Судебное разбирательство, "Советская Юстиция" 1990 г.
3. ՀՀ Սահմանադրություն, Պաշտոնական տեղեկագիր ՓԲՀ. - Երևան : Տիգրան ՄԵԸ. Ա. թ. - 94 էջ:
4. St'u Лукашевич В.З., Чичканов А.Б. "Принцип состязательности и равноправие сторон в новом УПК РФ и правосудие", С. 103
5. St'u Загорский Г.Н. "Судебное разбирательство по уголовным делам" М.: Юридическая литература. 1985 г. С. 121
6. St'u Радева Р., Ларин А.Н., "Защита прав потерпевшего" М.: Наука, 1993 г. С. 213
7. ՀՀ Քրեական Դատավարության Օրենսգիրք: Պաշտոնական տեղեկագիր ՓԲՀ. - Երևան : Տիգրան ՄԵԸ, 2007. - 276 էջ: